## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

### «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գասպարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Պողոսյան, Ա. Երմազյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

---

**Էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին**

(Ա. Գասպարյան)

1. Փաստաթղթերի գնահատման՝
- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321/1 սենյակ.
-օրը՝ 07.12.2018թ., -ժամը՝ 11:30
Ընդունել ի գիտություն որ.

1.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը և «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 03.12.2018թ. հարցում է ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, որի տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 7000 /յոթ հազար/ ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը:

1.2 Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 44-րդ կետով և «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 20-րդ կետով՝ որոշեց մերժել «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով և «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նշված չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | տվյալները |
|---|---|---|
| 1 | ԷԼԻՏԱ ԷՍՎԵ ՍՊԸ | բավարար |

| | | |
|---|---|---|
| 2 | ԷԼԻՏԱ ԷՍՎԵ ՍՊԸ | անբավարար |
| 3 | ԷԼԻՏԱ ԷՍՎԵ ՍՊԸ | անբավարար |

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

2. «Գնումների մասին» օրենքի պահանջների համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց, որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ հայտարարել 1-ին չափաբաժնի մասով «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն,

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

3. «Գնումների մասին» օրենքի պահանջների համաձայն՝ հայտարարել անգործություն /10 օրացուցային օր/ և անգործության ավարտից հետո իրավերով նախատեսված կարգով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր.

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

Հանձնաժողովի

Նախագահ՝ ______________ Ա. Գասպարյան

Անդամներ՝ ______________ Տ. Պողոսյան

______________ Ա. Երմագյան

Քարտուղար՝ ______________ Ի. Եղիազարյան